Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
մայիսի 6-ի N 736 - Ն որոշման

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՕՐԻՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՂԻՆ ՀԱՄԱՐԺԵՔ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԸ

1. Սույն կարգով սահմանվում են ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ռազմական դրությամբ պայմանավորված խնդիրները լուծելու նպատակով օգտագործված ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքը վերադարձնելու անհնարինության դեպքում օրինական տիրապետողին համարժեք փոխհատուցում տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով գույքը վերադարձնելու անհնարինություն է համարվում գույքը բնեղենով վերադարձնելը կամ վերադարձված գույքն ըստ այդ գույքի նպատակային նշանակությանն օգտագործելը բացառող հանգամանքը:

3. Փոխհատուցում ստանալու նպատակով օրինական տիրապետողը դիմումը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

4. Դիմումը կարող է ներկայացվել նաև օրինական տիրապետողի ներկայացուցչի կամ իրավահաջորդի կողմից:

5. Փոխհատուցում տալու նպատակով նախարարությունը ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ռազմական դրությամբ պայմանավորված խնդիրները լուծելու նպատակով իրենց կողմից օգտագործված ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքը վերադարձնելու անհնարինության դեպքում համարժեք փոխհատուցում տալու նպատակով ընդունում է օրինական տիրապետողի (ներկայացուցչի կամ իրավահաջորդի) կողմից համապատասխան դիմում՝ համաձայն N 1 ձևի, անձը հաստատող փաստաթղթի պատճենը (իրավաբանական անձանց դեպքում՝ պետական գրանցման վկայականի պատճենը), դիմումն օրի-

նական տիրապետողի ներկայացուցչի կամ իրավահաջորդի կողմից ներկայացվելու դեպքում՝ համապատասխանաբար ներկայացուցչի լիազորությունները կամ անձի իրավահաջորդ հանդիսանալու փաստը հաստատող փաստաթղթեր, տվյալ գույքի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթուղթ, իսկ դրանց բացակայության դեպքում՝ գույքի հանձնումը հավաստող փաստաթուղթ և դրանք ստանալուն հաջորդող օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հանձնաժողովի քննարկմանը:

6. Սույն որոշմամբ սահմանված ժամկետները բաց թողնելու դեպքում դիմումին կցվում են նաև բաց թողնված ժամկետները հարգելի համարելու վերաբերյալ հիմնավորումներ, որոնք քննության են առնվում նախարարության կողմից և 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմումը քննելու կամ այն վերադարձնելու մասին պատշաճ իրազեկվում է դիմումը ներկայացնողին:

7. Դիմումում կամ կից փաստաթղթերում թերությունների առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում նախարարությունը դիմումն ստանալուն հաջորդող օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում դրանք հայտնաբերելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դիմումը վերադարձնում է օրինական տիրապետողին (ներկայացուցչին կամ իրավահաջորդին)՝ առաջարկելով 5 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել թերությունները՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 41-րդ հոդվածներով:

8. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված հիմքերով դիմումը մերժվում է, եթե դրա մասին պատշաճ ձևով նախարարության կողմից դիմումը վերադարձվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում օրինական տիրապետողը (ներկայացուցիչը կամ իրավահաջորդը) չի վերացնում դիմումում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:

9. Միջգերատեսչական հանձնաժողովի աշխատակարգով սահմանված կարգով ուսումնասիրվում են սույն կարգի 5-րդ կետով սահմանված՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներկայացված փաստաթղթերը, և 30-օրյա

ժամկետում փոխհատուցում տալու վերաբերյալ առաջարկությունները նախարարության միջոցով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը ներկայացնելու նպատակով, ընդ որում, փոխհատուցում տալու վերաբերյալ առաջարկություն ներկայացվելու դեպքում նշվում է նաև առաջարկվող փոխհատուցման չափը:

10. Փոխհատուցում ստանալու մասին դիմումը մերժվում է սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով դիմումում կամ կից փաստաթղթերում առկա թերությունները չվերացնելու կամ անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր չներկայացնելու դեպքում, ինչպես նաև, եթե գույքի վերադարձման անհնարինությունը չի բխում ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ռազմական դրությամբ պայմանավորված խնդիրները լուծելու նպատակով այդ գույքի օգտագործումից:

11. Ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում ռազմական դրությամբ պայմանավորված խնդիրները լուծելու նպատակով օգտագործված ֆիզիկական և իրավաբանական անձանց գույքը վերադարձնելու անհնարինության դեպքում, որպես համարժեք փոխհատուցում, կարող է դիտարկվել այն գինը, որով գնահատվող, նույնական կամ համանման ապրանքները վաճառվում են կամ հասանելի են հանրային աղբյուրներում, ընդ որում, նույնական գույքերի դեպքում ընտրվում է մեկ միջինացված արժեք:

12. Հայաստանի Հանրապետության կառավարությունը, սույն կարգի 9-րդ կետում նշված առաջարկությունների համաձայն, 30-օրյա ժամկետում ընդունում է համապատասխան որոշում, որով սահմանվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց ցանկը, գույքի անվանումը և փոխհատուցման չափը:

13. Սույն կարգը չի տարածվում «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 8.1-ին հոդվածի 17-րդ մասում նշված դեպքերի վրա:

Ձև N 1

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն

_____

(ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը,

իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը,

հասցեն/գործունեության իրականացման վայրը, կոնտակտային տվյալները)

ԴԻՄՈՒՄ

---------- թվականին (ամիսը, ամսաթիվը) ————————- ին պատկանող ——————————————— (գույքի տվյալները) գույքը ռազմական դրությամբ պայմանավորված խնդիրները լուծելու նպատակով տրամադրվել է ——————— ——————— ին (պետական մարմնի անվանումը)։

Խնդրում եմ վերադարձնել տրամադրված գույքը կամ անհնարինության դեպքում տրամադրել «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 8.1-ին հոդվածով սահմանված փոխհատուցում։

Դիմող _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

——— ——————20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

07.05.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ